

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Այսպիսին որքան բարձր կը թռչի դէպի առաքինութեան բարձունքը, այնքան անոր մէջ կը չարանայ անկումի երկիւղը, եւ որքան վախնայ անկումէն՝ այնքան վեր կը սլանայ դէպի առաքինութիւններու ծայրագոյն գագաթը: Ուստի չի մտահոգուիր ունեցածէն կամ իշխանութենէն զրկուելու, հայրենիքէն տարագրուելու, առողջութիւնն ու մարմինը կորսնցնելու համար, որովհետեւ քաջ գիտէ՝ որ անոնք անցատր են ու բնութեամբ կորստական, իսկ առաքինութեան վարքը, որ արքայութեան փառքն է՝ անկողոպտելի է ու հոգիի յաւիտենական հաստատութիւն: Ուստի աշխարհի տեսակ-տեսակ ձախորդութիւններէն չի տխրիր ու ընկճուելով չի յուսահատիր, որովհետեւ հաստատուն յոյս ունի՝ Տիրոջմէ ստանալու իր աշխատանքի վարձքը՝ յաւիտենական կեանքին մէջ:

Առաքինին իր գործած բարիքը չի մտաբերեր ու կը ցաւի այն բարիքներուն համար, որ ծուլութեան պատճառով չէ կատարած: Բարերարի երախտիքը միշտ կը յիշէ ու կրած անիրաւութիւնները կը մոռնայ: Իր ունեցածը բաւական կը համարէ, իսկ ուրիշներուն շատը՝ ոչինչ: Կ'ընկերակցի բարի մարդոց եւ չարերու հետ կապ չունենար: Մեծամեծներու դիմաց ակնածալից ու լուռ կը մնայ եւ հաւասարներու ու փոքրերու հետ քաղցրութեամբ կը վարուի:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կենջ մը վկայութիւնը:

Պատէն քաղաքէն ստացուած նամակի մը մէջ կը կարդանք. «Դրացուհիս պառաւ կին մըն է: Շատոնց է կախարդութեամբ կը զբաղի: Կ'ըսեն, թէ կը յաջողի ապագան գուշակել: Մայրս, առանց խորհուրդ հարցնելու մեծ մօրմէս, որ ճշմարիտ հաւատացեալ էր եւ երբեք նման բան թող չէր տար, խնդրեց այդ պառաւէն՝ որ իր ապագան գուշակէ: Այդ կինը, հակառակ անոր որ մեծ մայրս դէմ էր, յաճախ կու գար մեր տունը: Չէի յաջողեր աղօթել, որովհետեւ տունը չար ոգիներով կը լեցուէր: Ես գաւակնեւրէն կրտսերն էի: Վեց տարեկանիս հիւանդացայ թոքատապով: Երբ հատուն տարիքի հասայ, մայրս կախարդի մը քով գնաց, որպէսզի հասկընայի՝ պիտի ամուսնանամ, թէ՛ ոչ: 15 տարեկան էի, երբ մեծ մայրս մեռաւ եւ անոր հետ միասին աղօթքներու բարի հոգին անհետացաւ եւ Սատանան լրիւ ազատութիւն ստացաւ մեր տունին մէջ: Ի վերջոյ զիս ալ համոզեցին, որ գուշակի դիմեմ: Մտածեցի, որ այլեւս նշանակութիւն չունի՝ մեղք մը աւելի կամ պակաս, եւ գացի: Գուշակը պատմեց անցեալս, ապագայէս ալ որոշ հատուածներ, յետոյ անսպասելիօրէն ընդհատեց խօսքը եւ ըսաւ. «Այնպիսի վիճակի մէջ եմ, որ կարծես թէ մէկը աչքերուս առջեւ թուղթ կը բռնէ...»

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՐԻՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆԵՐՈՐԻՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2012 ԹԻՒ 43

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 4.14-24

Յիսուս Գալիլիա վերադարձաւ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ամբողջ գաւառին մէջ իր համբաւը տարածուեցաւ: Անոնց ժողովարաններուն մէջ կ'ուսուցանէր՝ արժանանալով բոլորին հիացումին եւ

գովասանքին: Եկաւ Նազարէթ քաղաքը, ուր մեծցած էր եւ իր սովորութեան համաձայն Շաբաթօրը ժողովարան գնաց: Երբ ոտքի ելաւ կարդալու օրուան ընթերցուածը, իրեն տուին Նսայի Մարգարէին գիրքը: Բացաւ եւ գտաւ այն տեղը ուր կ'ըսէր. «Տիրոջ Հոգիին վրաս է. որովհետեւ օծեց զիս եւ զրկեց՝ աղքատներուն փրկութեան աւետիս տալու, սրտաբեկները միխթարելու, աւետիլու՝ թէ գերիները պիտի ազատագրուին, կոյրներուն աչքերը պիտի բացուին, հարստահարուածները պիտի ազատին. եւ յայտարարելու թէ ահա հասած է ժամանակը երբ Տէրը պիտի փրկէ իր ժողովուրդը»:

Ապա գիրքը գոցեց, տուաւ պաշտօնեային եւ նստաւ: Ժողովարանին մէջ գտնուողներուն բոլորին աչքերը իրեն սեւեռած էին, երբ ըսաւ. «Այս մարգարէութիւնը, որ դուք լսեցիք՝ ահա այսօր իրականացաւ»: Ամէնքն ալ տպաւորուած էին իրմէ, եւ հիանալով անոր շնորհալի խօսքերուն վրայ կ'ըսէին. «Այս մարդը Յովսէփի որդին չէ՞»:

Յիսուս ըսաւ. «Անտարակոյս ինձի պիտի ըսէք հետեւեալ առածը: «Բժիշկ, դուն բեզ բժշկէ»: Եւ պիտի ըսէք. «Ինչ որ լսեցիք թէ գործեր եւ Կափառնաուսի մէջ, այստեղ՝ քու քաղաքիդ մէջ ալ կատարէ»: Եւ աւելցուց. «Բայց դուք ալ գիտէք, որ մարգարէն իր ծննդավայրին մէջ յարգ չունի»:

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ (Սաղմոս 13)

Տէր, մի՞նչեւ ե՞րբ զիս պիտի անտեսես, մի՞նչեւ ե՞րբ երես պիտի դարձնես ինձմէ: Մի՞նչեւ ե՞րբ պիտի տագնապիմ, եւ ամէն օր տրտմութեամբ մաշիմ. մի՞նչեւ ե՞րբ թշնամիս յաղթանակ պիտի տանի իմ վրաս: Տե՛ս եւ պատասխան տու՛ր, Տէ՛ր, իմ Աստուած, լուսաւորէ՛ աչքերս, որպէսզի մահուան ֆունով չփնանամ: Չըլլայ որ թշնամիս ըսէ. «Յաղթեցի՛ իրեն», կամ՝ նեղիչներս ուրախանան անկումովս: Ես ֆու ողորմութեանդ վստահեցայ. սիրտս ֆու փրկութեամբդ պիտի ցնձայ: Քե՛զ պիտի երգես, ո՛վ Տէր, դուն՝ որ ինձի բարիք ըրիր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐՔՈՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱՅՆ՝ ՄԱՏԹԷՈՍԻ, ՄԱՐԿՈՍԻ, ՂՈՒԿԱՍՈՒ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Մատթեոս Աւետարանիչ

Մատթեոս առաքեալ պաշտօնով մաքաւոր, աշակերտներուն մէջ կը ներկայացնէ հրէական ժողովուրդի այլ դասակարգ մը: Մաքաւորները հրէական ընկերութեան մէջ հաշտ աչֆով չէին դիտուեր: Անոնք Հոռմէական կայսրութեան պաշտօնեաներ էին եւ ժողովուրդին վրայ դրուած տուրֆերը կը հաւաքէին, եւ աւելին, շահագործելով իրենց պաշտօնը աւելիով կը գանձէին ժողովուրդէն:

Մատթեոս առաքեալ նաեւ կոչւած է Ղեւի (Մր 2.14): Ան իր անունը կրող աւետարանով, ուր բազմաթիւ մէջբերումներ կը կատարէ Հին Կտակարանի գիրքերէն, կը փորձէ հրեայ ժողովուրդին փաստել, թէ սպասուած Մեսիան Յիսուս ինք է:

Կ'ըսուի թէ Մատթեոս քարոզած է Եթովպիոյ կամ Պարսկաստանի մէջ՝ ուր նահատակուած է:

Մարկոս Աւետարանիչ

Մարկոսի գրած Աւետարանը, բաղդատմամբ միւս աւետարաններուն, համառօտ եւ կարճ ու կտրուկ ոճով գրուած Աւետարան մըն է: Ան հնագոյն աւետարանն է եւ ուղղուած է Հոռմի քրիստոնեաներուն, գ'քրիստոս ներկայացնելով բարձր հեղինակութեան եւ իշխանութեան տէր անձ մը՝ Մարդու Որդին:

Մարկոս, որու հրէական անունը Յովհաննէս էր, ընկերակիցը կ'ըլլայ Պողոսի եւ Բառնաբայի, առաքելական առաջին քաղաքացիական ընթացքին եւ սակայն կէս ձգելով առաքելութիւնը կը վերադառնայ Երուսաղէմ: Ապա Բառնաբայի հետ կը մեկնի Կիպրոս եւ աւանդութիւնը կ'ըսէ, թէ ան կ'անցնի Եգիպտոս եւ կը հիմնէ Աղեֆսանդրիոյ եկեղեցին:

Մարկոս առաքեալի մայրը նոյնպէս կ'ըլլայ գործունեայ հաւատացեալ քրիստոնեայ մը, որու տունը կը դառնայ քրիստոնեական արարողութիւններ կատարելու աղօթավայր մը:

Ղուկաս Աւետարանիչ

Ղուկաս Աւետարանի եւ Գործք Առաքելոց գիրքի բացայայտ հեղինակը եղած է նոյնիմէ Ղուկաս առաքեալ, որ Պողոս Առաքեալի առաքելական քաղաքացիական ընթացքին ընկերակից եղած է անոր եւ աշխատած անոր հետ քրիստոնեութեան տարածման քարոզչական մէջ:

Ղուկաս ուսումով եղած է բժիշկ եւ իր ունեցած իւրայատուկ գիտական ծանօթութեամբ, իր գրած գիրքերու մէջ նոյնիմէ կը յիշէ քրիստոսի բժշկած հիւանդութիւններուն անունները եւ գանգաւ մանրամասնութիւնները, զորս չեն գտներ միւս աւետարաններուն մէջ: Ան աւետարանը գրի կ'առնէ բազմաթիւ ծանօթութիւններ ֆաղելով Քրիստոսի մասին, նոյնիմէ հարցուփորձելով Աստուածամայր կոյսը, որով կարելի պիտի ըլլայ արձանագրել Քրիստոսի մանկութեան եւ պատանութեան շրջանին կատարուած դէպքերը: Ղուկասի Աւետարանը ուղղուած է բոլոր նորադարձ քրիստոնեաներուն:

Ղուկասի ծննդավայրին մասին մի քանի կարծիքներ կան, բայց առաւելաբար ընդունուած է, թէ ան Մակեդոնիայի Փիլիպպէ քաղաքէն է եւ հետեւաբար յոյն է: Ան ընկերացած է Պողոսին նոյնիմէ միւսին Հոռմ, ուր գրած է իր Աւետարանը եւ ապա Գործք Առաքելոց գիրքը:

Յովհաննէս Աւետարանիչ

Առաքելներու դասին մէջ ամենէն կրտսեր եւ ամենէն երկար ապրող առաքելն է Յովհաննէս, որ նաեւ ցանցուած է Սիրելի Աշակերտ՝ անունով:

Յովհաննէս եւ իր եղբայրը՝ Յակոբոս, Քրիստոսի կողմէ կը կանչուին երբ ձկնորսութեամբ կը զբաղէին: Ան Քրիստոսի ետեւեայ առաքելութեան ընթացքին ամենասիրելի անձը կ'ըլլայ Տիրոջ, եւ նոյնիմէ երբ մատնութեան ժամանակ միւս աշակերտները վախճալով կը լքեն գ'քրիստոս եւ կը փախչին, Յովհաննէս կը հետեւի Անոր հասնելով միւսին Գողգոթա, ուր իր սիրոյն առ ի գնահատանք, Յիսուս Մարիամ Աստուածածին կոյսը կը յանձնէ Յովհաննէսի ինձամբին եւ այդպիսով կ'արանդէ Իր հոգին:

Յովհաննէս առաքեալ նաեւ ծանօթ է իր անունը կրող սֆանջիկի աւետարանով՝ Աւետարան Ըստ Յովհաննէս: Ան իր առաքելութիւնը կը շարունակէ Եփեսոսի մէջ եւ ապա ախտաբեր կը տարուի Պաթմոս կղզի, ուր կ'ունենայ իր յայտնութիւնները, որոնք ամփոփուած են Յայտնութիւն Յովհաննէս՝ գիրքին մէջ: Ունի նաեւ երկու ընդհանրական նամակներ, ուր կը խօսի կեղծ վարդապետութիւններէն զգուշանալու մասին եւ կը թելադրէ կեանքը ապրիլ նշմարտութեամբ ու սիրով:

Յովհաննէս առաքեալ բնական մահով կը մեռնի 95 տարեկանին, շուրջ Քրիստոսի 100 թուականին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, ողորմեցե՛ք ձեզի, ինձայեղէ՛ք իրարու եւ մի՛ առէ՛ք գիրքար: Մի՛ նախանձիք, ոյս մի՛ պահէ՛ք, մի՛ մատնէ՛ք, մի՛ գրկէ՛ք, մի՛ չարախօսէ՛ք մի՛ անարգէ՛ք, խոռով մի՛ մնա՛ք, մի՛ զարնէ՛ք, անողորմ մի՛ ըլլա՛ք, փոքր բաներու համար եւ պզտիկ պատճառով մի՛ վիճի՛ք, կոռուի՛ք ու հակառակի՛ք, որովհետեւ ամէն դատարկ, զուր եւ անիրաւ բանի համար հաշիւ պիտի տա՛ք դատաստանին օրը:

Արձանագրել ետք կանոնական այս խրատն ու պատուիրանը, զոր աստուածային Գիրքը կը հրամայէ եւ հրաժարական բնոյթ ունի, որովհետեւ կը յիշեցնէ այն ինչ որ քրիստոնեան պէտք չէ ընէ, այժմ կը գրենք այն՝ որ քրիստոնեան պէտք է ընէ հարկադրաբար եւ Աստուծոյ օրէնքը կը հրամայէ կատարել:

ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐԸ ՅԻՇԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Քրիստոս , Որդի Աստուծոյ, որ ներողամիտ եւ բարեգութ. արարչական սիրովդ գթա՛ քու հանգուցեալ ծառաներուդ: Յիշէ՛ զանոնք այն մեծ օրը, երբ արքայութեանդ պիտի գաս: Քու ողորմութեամբդ ֆաւէ՛ եւ ներէ՛ անոնց մեղքերը: Լոյսովդ պայծառացո՛ւր զանոնք սուրբերուդ հետ միասին, որոնք քու աջակողմդ պիտի դասուին. որովհետեւ դո՛ւն եւ բոլորին Տէրն ու Արարիչը, ողջերու եւ մեռելներու դատաւոր. եւ քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՅՈՒՍԱՅԱՊՏ ԵՍ, ԴԻՍԷ՛
ՏԻՐՈՋ
ՍԱՂՄՈՍ 28

Տէ՛ր, օգնութիւն կ'ուզեմ քեզմէ: Դո՛ւն ես իմ պատասխանս: Ականջներդ մի՛ փակէր. լուռ մնալդ պատճառ կ'ըլլայ որ ես ողջ-ողջ գերեզման իջնեմ:

Լսէ՛ խնդրանքս, երբ որ քեզմէ օգնութիւն կ'աղերսեմ, երբ ձեռքերս դէպի սուրբ տաճարդ կը բարձրացնեմ:

Զիս մի՛ դասեր ամբարիշտներուն հետ. անոնց՝ որոնք չարիք կը հասցնեն ուրիշին, որոնք իրենց խօսքերուն մէջ սիրալիր են մարդոց հետ, մինչ իրենց սիրտերուն մէջ չարութիւն կայ:

Պատուհասէ՛ զանոնք իրենց գործերուն համաձայն, տո՛ւր արժանի պատիժը իրենց չարսիրտ վարմունքին. իրենց ըրածին համեմատ վարուէ՛ իրենց հետ, հատուցանելով իրենց այն՝ ինչ բանի որ արժանի են:

Քանի անոնք կ'արհամարհեն Տիրոջ գործը եւ ինչ որ ան ստեղծեց Տէրը զանոնք պիտի կործանէ այնպիսի ձեւով՝ որ այ երբեք չկանգնին:

Օրհնեա՛լ է Տէրը, որ աղօթքիս պատասխանեց:

Զօրութիւնս է ան եւ իմ պաշտպանս. ես իրեն կը վստահիմ. իրմէ՛ կու գայ օգնութիւնս եւ իմ սիրտս կը ցնծայ. հետեւաբար իմ երգովս անոր գոհութիւն պիտի յայտնեմ:

Տէրը իր ժողովուրդին զօրութիւնն է եւ ապաւէնը ու փրկիչը՝ իր օծեալին:

Տէ՛ր Փրկէ՛ եւ օրհնէ՛ քու ժողովուրդդ, որ քու ժառանգութիւնդ է. դուն հովուէ՛ զանոնք եւ ուսիդ առած՝ առաջնորդէ՛ մինչեւ յաւիտեան:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԷՆ

20.1--21.6

Ասորեստանի Սարգոն թագաւորին հրամանով Տարաթան հրամանատարի Ագոտոս գալէն եւ պատերազմով գայն գրաւելէն երեք տարիներ առաջ, Տէրը հետեւեալ պատուէրը տուաւ Ամոսի որդի Նայիին. *«Գնա՛ հագուստդ վրայէդ հանէ՛ եւ հողաթափդ ալ՛ ռոտերէդ»*: Նայի մարգարէ ըսուածը կատարեց եւ սկսաւ մերկ ու բոպիկ պտըտիլ: Տէրը այսպէս ըսաւ. *«Ահա երեք տարի է որ իմ ծառաս՛ Նայի մերկ ու բոպիկ կը պտըտի: Անիկա նշան եւ օրինակ պիտի ըլլայ եգիպտացիներուն եւ եթովպացիներուն համար: Թող հասկնան թէ միշդ այդպէս Ասորեստանի թագաւորը գերի պիտի տանի եգիպտացիներն ու եթովպացիները, ծեր թէ երիտասարդ, բոլորն ալ մերկ ու բոպիկ, իրենց ամօթոյքն ալ բաց, որպէսզի խայտառակուի Եգիպտոսը: Պարտութեան մատնուած եգիպտացիները ամօթ պիտի գգան եթովպացիներուն համար, որոնց վրայ դրած էին իրենց յոյսը. որովհետեւ եթովպացիներն էին Եգիպտոսի վրայ իշխողը: Այն օրը փղշտացիները պիտի ըսեն. "Մենք ասոնց օգնութեան ապաւինած էինք, մինչդեռ ասոնք նոյնիսկ իրենք գիրենք չկրցան ազատել Ասորեստանի թագաւորէն. մե՞նք ինչպէս պիտի ազատինք"»*:

Բարեյո՞նի վերաբերող պատգամը.-- Անապատէն անցնող մրրիկին պէս փոթորիկ մը կու գայ ահա անապատ երկրէն: Ահաւոր է տեսիլքը, եւ ինծի յայտնուածը՝ սարսափելի:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆ**

4.3-18

Որքան ատեն, որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեր օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

Ճիշդ է, որ նախապէս երբ զԱստուած չէիք քանչնար՝ չաստուածներու կը ծառայէիք: Բայց հիմա որ զԱստուած քանչցաք եւ մանաւանդ Աստուած ալ ձեզ քանչցաւ, ի՞նչպէս կրկին կը վերադառնաք բնութեան տկար ու խեղճ ոյժերու պաշտամունքին եւ վերստին կ'ուզէք անոնց ծառայել. յատուկ կարեւորութիւն կու տաք որոշ օրերու եւ ամիսներու, որոշ ժամանակներու կամ տարիներու: Կը վախնամ որ ձեզի համար տարած ամբողջ աշխատանքս գուր անցած ըլլայ:

Կը խնդրեմ, եղբայրներ, ինծի պէս եղէք, որովհետեւ ես ալ ժամանակ մը ձեզի պէս էի:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՄՆԵՆ**